



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

<< ----->> << ----->> 2021թ.

N -----

<<Նտաքննող լրագրողներ>>  
 հասարակական կազմակերպության  
 <<Նտք>> թերթի լրագրող  
 պարոն՝ Գ.Բալասանյանին

Հարգելի պարոն Բալասանյան

Ի պատասխան Ձեր 18.02.2021թ. գրության տեղեկացնում ենք, որ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքում << Տիեռաս դե Արմենիա>> ընկերությունն ունի 2301.0հա հողատարածք որից բերքատու խաղողի այգի 355.5378հա, իսկ երիտասարդ խաղողի այգի 8.502հա, 4-րդ կարգի վարելահող 10.3հա, 5-րդ կարգի վարելահող 317.6հա. 4-րդ կարգի արոտավայր 450.0հա, 4-րդ կարգի արոտավայր 9.5 հա, 5-րդ կարգի արոտավայր 1134.5602 հա, նպատակային նշանակության փոփոխության արդյունքում 15.0հա-ը դարձել է արտադրական նշանակության հողատարածք:

Ինչ վերաբերում է մարզպետարանի կողմից Ձեր գրությամբ ներկայացված հարցի լուծման եղանակին, հաշվի առնելով նաև ներկայացված իրավակարգավորումները, ապա Արևադաշտ համայնքի ղեկավարին, որպես մեթոդական աջակցություն, առաջարկվել է <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն իրականացնելու համապատասխան վարչական վարույթ՝ հանրային իրավական դրամական պահանջների հիմքով (օրենքի 13-րդ գլուխ):

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<զ>> ենթակետի համաձայն, որպես վարչական մարմիններ, հանդես են գալիս նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը: Նույն օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է: Նշված օրենքով սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են իրականացնելու համայնքի բյուջեի նկատմամբ դրամական պարտավորությունների հարկադիր գանձումներ, որոնք վերաբերում են միայն հողի հարկի և գույքահարկի հավաքագրման վարչարարությանը:

2. ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքում «Տիեռաս դե Արմենիա» ընկերությունը գրադեցնում է 2301.0հա հողատարածք, որի հողի հարկը կազմում է 3045.169 հազ. դրամ /երեք միլիոն քառասունհինգ հազար մեկ հարյուր վաթսունհինգ դրամ/:

3. «Տիեռաս դե Արմենիա» ընկերությունը վճարումները կատարել է համայնքի հողի հարկի և գույքահարկի բազայում առկա տվյալներով, սակայն ՀՀ կադաստրի կոմիտեի հետ վերջնական ճշգրտման արդյունքում առաջացած գումարի տարբերության՝ ավել վճարելու պատճառով էլ 2019-2020թթ.-ին հարկ չի վճարել:

4. «Տիեռաս դե Արմենիա» ընկերությունը չի վճարում Արևադաշտ համայնքի վարչական տարածքում գտնվող գործարանի գույքահարկը, պատճառաբանում է, որ ավարտուն տեսք չունի / սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական չունի/:

5. ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայք էջում (armavir.mtad.am) և մարզի համայնքների կայք էջերում տեղադրված են համայնքների վերաբերյալ տեղեկությունները՝ հաշվետվություն խոշոր հարկատուների վերաբերյալ ըստ ֆիզիկական և իրավաբանական անձանց անվանումների, հարկատեսակի և դրա գծով ունեցած պարտքի չափի՝ 01.02.2020թ. դրությամբ:

Տեղեկացնում ենք նաև, որ «Տիեռաս դե Արմենիա» ընկերության ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքում ունեցած սեփականության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությանը մարզպետարանը չի տիրապետում, ուստի այն կարող եք ստանալ համայնքապետարանից:

**Հարգանքով՝**

**Հ.Մաթևոսյան**

Կատ՝ Վ.Մկրտչյան  
հեռ. 0237.2.24.12